ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

25 հունիսի երեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

85
(2935)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

# ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԻ ԱՐԺԵՔԸ՝ 300 ԴՐԱՄ

Երեկ Վարդենուտ գյուղի բնակիչները բողոքում էին ՀՀ կառավարության՝ 2023 թ. մարտի 2-ի որոշմամբ գյուղի հողերը գերակա շահի ճանաչելու դեմ, որոնք պետք է օգտագործվեն «ՌԻԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ ամառային եւ ձմեռային զբոսաշրջային, լեռնադահուկային, էկոգյուղատնտեսական արտադրության կենտրոնի ստեղծման եւ ջրամբարի կառուցման՝ «Արագած» ներդրումային ծրագրի իրականացման համար: Առաջարկվում է Արագած լեռան լանջին լեռնադահուկային եւ էկոգյուղատնտեսական նոր համալիր ստեղծել, որը վերաբերելու է Վարդենուտ, Արագած, Արայի եւ Շենավան բնակավայրերին:

Հարկ է նշել, որ կառավարությունը հանրային գերակա շահի վերաբերյալ որոշում է կայացրել 113 հա տարածքի վերաբերյալ:

Ըստ ՀՀ Արագածոտնի մարզպետ Սերգեյ Մովսիսյանի՝ պատճառը բնակիչների եւ «ՌԻԴ» ՍՊԸ-ի միջեւ անհամաձայնությունն է: Բանն այն է, որ իշխանության կողմից մեկ տարի առաջ հաստատված ծրագրի շրջանակում ծրագրի իրականացման տարածքում համայնքի բնակիչներին պատկանող հողի գնահատված արժեքը 270-ից 300 դրամ է կազմել: Այսինքն՝ հայրենի հողի մեկ քառակուսի մետրն արժե 300 դրամ:

ՀՀ Արագածոտնի մարզպետ Սերգեյ Մովսիսյանի պնդմամբ՝ քաղաքացիների պահանջը ֆինանսական է՝ շատ գումար. իսկ որոշ մասը իր հողամասը վաճառել պարզապես չի ցանկանում:

Գրեթե 113 հեկտար հողային տարածքի վրա կառուցվող «Արագած» ներդրումային ծրագրի ծավալը կազմում է 190 մլն դոլար:

Այս գումարների միջոցով կառուցվելու է լեռնադահուկային համալիր՝ 5 ճոպանուղիների գծերով, մոտ 30 կմ սահուղիներով, հյուրանոցներով եւ այլն: Կառուցվելու է 25 հազար 260 քառակուսի մետր ճանապարհ եւ 104 հազար 920 քառակուսի մետր բակային ճանապարհ, ավտոկայանատեղիներ՝ ըստ նախագծի:

Նշենք, որ ծրագրի իրականացման համար հայտարարված մրցույթում հաղթող էր ճանաչվել «ՌԻԴ» ընկերությունը, որը պատկանում է ռուսաստանաբնակ գործարար Ռուբեն Գրիգորյանին: Ռուբեն Գրիգորյանը հայտնի ներդնող է Հայաստանում, նա անգամ ֆինանսավորել է Զարուհի Փոստանջյանի գլխավորած «Երկիր ծիրանի» կուսակցությանը:

Կադաստրի կոմիտեից փորձեցինք ճշտել, թե ինչպես է որոշվել հողերի կադաստրային արժեքը: Խնդրեցին հարցում ուղարկել, քանի որ տարբեր բանաձեւեր կան հողերի կադաստրային հարցերի որոշման համար:

Քաղաքացիների կողմից Երեւան-Ապարան մայրուղու փակվելուց, ապա բացվելուց ժամեր անց՝ ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գառնիկ Դանիելյանը հայտնեց, որ այս խնդրի մասին բարձրաձայնել է դեռ դեռեւս ամիսներ առաջ. «Այս խնդրին անդրադարձել եմ փետրվարին՝ հրապարակումներով, գրություններով, ԱԺ հարցուպատասխանի ժամանակ վարչակարգի ղեկավարին հարց ուղղելով: Հարցուպատասխանի ժամանակ իմ հարցին ի պատասխան՝ վարչապետը պատասխանեց, որ առաջին անգամ է լսում այդ մասին, սակայն հարցը անարձագանք չի մնա, եւ այդ հարցով կզբաղվի էկոնոմիկայի նախարարությունը»:

Ստացվում է, որ երկրի ղեկավարն անգամ տեղյակ չէ երկրի հողի արժեքից եւ դրա սահմանման կարգից, պարզապես ծրագրեր է հաստատում եւ միլիոններ է դուրս գրում պետբյուջեից, սակայն ինչպես դրանք կօգտագործվեն, մեղմ ասած, նրան չեն հետաքրքրում. միեւնույնն է՝ նա Իլհամ Ալիեւի պահանջով հեշտությամբ հողերը հանձնում է:

Քաղաքական ժողովի ժամանակ ՔՊ-ականները սպառիչ պատասխաններ այդպես էլ չեն ստացել Նիկոլ Փաշինյանից: Ինչպես արդեն հայտնել էինք, շաբաթ օրը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը Հանքավանում, Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, հավաք է անցկացրել՝ քաղաքական ժողով: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ժողովը առավոտյան 10:00-ից մինչեւ երեկոյան 17:00-ն է տեւել: Հիմնականում Նիկոլ Փաշինյանը երկար «դասախոսություն» է կարդացել իր հռչակած իրական ու պատմական հայաստանների մասին: Ըստ էության՝ Փաշինյանի խոսքում ՔՊ-ականները որեւէ նոր բան չեն լսել, իսկ նրանց հարցերն այդպես էլ հստակ պատասխաններ չեն ստացել: Փաշինյանը որեւէ հստակեցում չի արել՝ ի վերջո ինչ է սպասվում սահմանազատման արդյունքում, ուր է գնում Հայաստանը, վերջին օրերին ԵՄ անդամակցության հարցը որքանով է իրատեսական: Ավելին՝ այլեւս անթաքույց հայտարարել է՝ որեւէ երաշխիք չկա, որ սահմանազատումից կամ մյուս պահանջների կատարումից հետո Ադրբեջանը վերջնական խաղաղության կգնա ու այլեւս սադրանքների չի դիմի: Այս խնդիրների վերաբերյալ բոլոր հարցերին անորոշ ու հռետորական պատասխաններ է տվել: Քաղաքական ժողովի ժամանակ խոսվել է նաեւ «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման մասին, Փաշինյանն էլ իր թիմակիցներին «ավետել» է, որ այլեւս իրենց իշխանությանը վտանգ չի սպառնում, ուստի կարող են շարունակել հանգիստ զբաղվել կուսակցական գործերով: Ի դեպ, տեղեկացանք նաեւ, որ եթե, սովորաբար, քաղաքական նախորդ ժողովների ժամանակ ՔՊ-ականները մի ամբողջ օր հանգստի էին նվիրում, ապա այս անգամ կուսակցական ժողովն արել են ու նույն օրը վերադարձել:

Ծանոթանում ենք Նիկոլ Փաշինյանի ենթակայությամբ գործող պետական վերահսկողության ծառայության պետի տեղակալ Ռոբերտ Բազիկյանի եկամուտներին: Համաձայն նրա իսկ բառացի հայտարարագրածի՝ Ռոմանոս Պետրոսյանի տեղակալը «բերքը իրացրել է շուկայում»: Եթե այս կառեւորագույն համակարգի 2-րդ պաշտոնյան ժամանակ ունի բերք ցանելու, հնձելու, դեռ մի բան էլ շուկայում իրացնելու, առաջանում է հաջորդ հարցը, իսկ Բազիկյանը օրվա ո՞ր հատվածում է հասցրել աշխատել՝ իրականացնել պետական վերահսկողություն, որի համար ստացել է հարկատուներից գոյացած 14 միլիոն դրամը:

Երգիչ Սպիտակցի Հայկոյի որդու կալանավորումը մնացել է իրավապահ համակարգի կոկորդին: Գլխավոր դատախազությունը կգնա մինչեւ վերջ ու կալանավորման հարցը կտանի Վճռաբեկ դատարան: Նշենք, որ երեկ ՀՀ վերաքննիչ դատարանը եւս մերժեց դատախազության բողոքը՝ Հրաչյա Ղեւոնդյանի կալանավորման մասով: Գրել էինք, որ ՀՀ գլխավոր դատախազությունը խիստ է տրամադրված եւ ամեն գնով ցանկանում է կալանքի տանել երգիչ Հայկ Ղեւոնդյանի՝ Սպիտակցի Հայկոյի որդուն՝ Հրաչյա Ղեւոնդյանին: Մեզ հայտնի դարձավ, որ դատախազությունը բողոքարկել էր հայտնի երգչի որդու ազատ արձակման որոշումը եւ դիմել էր ՀՀ վերաքննիչ դատարան, սակայն վերաքննիչը եւս գործը կալանքի չտարավ, քանի որ հիմքեր չկային: Ինչպես հայտնի է, մայիսի 23-ին Հրաչյա Ղեւոնդյանն ազատ էր արձակվել առաջին ատյանի դատարանի նիստերի դահլիճից. դատարանը, հիմնավոր կասկածի բացակայության հիմքով, մերժել էր քննիչի՝ նրան կալանավորելու միջնորդությունը: Բանն այն է, որ քննչական կոմիտեն հայտարարել էր, որ իշխանությունը բռնությամբ զավթելու փորձ է կանխել: Իշխանությունը յուրացնելու նախապատրաստության համար մեղադրանք է առաջադրվել հանրությանը Սպիտակցի Հայկո անունով հայտնի երգիչ Հայկ Ղեւոնդյանի որդուն. նրան կալանավորելու միջնորդություն է ներկայացվել: Քննչական կոմիտեն տեսանյութ էր հրապարակել, որում մի տղամարդ դժգոհում էր վարչապետ Նիկոլ Փաշինյանի վարած քաղաքականությունից, ՔԿ-ն պնդում է, թե տեսանյութի խոսքերի հեղինակը Հրաչյա Ղեւոնդյանն է, որը նպատակ է ունեցել մի խումբ անձանց հետ զավթելու իշխանությունը. թե ովքեր են այդ անձինք, իրավապահները դեռ չեն պարզել, բայց, ըստ նախաքննական մարմնի, դիտարկվել էր նաեւ հանրահավաքին այդ ծրագիրն իրագործելու հարցը: Ղեւոնդյանը չի ընդունում իրեն առաջադրված մեղադրանքը: Նրա փաստաբանը հայտարարել էր՝ ձայնագրությունը մոնտաժված է, կոնտեքստից կտրված, իսկ իր պաշտպանյալն իշխանությունը զավթելու որեւէ մտադրություն չի ունեցել:

ԶՐՈՒՅՑ

# «ՊԱՐԶԱՊԵՍ ՎԱՅՐԷՋՔԻ ԱՆՅՈՂԻԿ ՓՈՒԼ Է»

**ArmLur.am-ը «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման գործողությունների, եկեղեցու դեմ սկսված արշավի եւ այլ հարցերի շուրջ զրուցել է Շիրակի թեմի առաջնորդ Միքայել Սրբազան Աջապահյանի հետ:**



**-Սրբազան, «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման գործունեությանը զուգահեռ հանրության մեծ մասը, ինչպես նաեւ իշխանության ներկայացուցիչները տարբեր տեսակետներ են հնչեցնում, թե շարժումը սպառել է իրեն, այն մարված է, եւ վկայակոչում են այն, որ հանրահավաքներին շատ մարդիկ ներկա չեն գտնվում: Դուք ի՞նչ տեսակետ ունեք, համամի՞տ եք արդյոք, թե շարժումը սպառել է իրեն:**

-Շարժումը սպառված չէ, գուցե այն հիմա որոշակիորեն վայրէջք է գրանցում, սակայն Բագրատ սրբազանը հաստատակամ է իր ընթացքի մեջ եւ կարող է իրավիճակ փոխվել: Իշխանությունները, իհարկե, հիմա այս փուլը պիտի օգտագործեն, ամեն բան անեն, որ այս կարճատեւ վայրէջքը տեւական դարձնեն:

**-Մենք հիմա էլ տեսնում ենք, որ շարժման մասնակիցների նկատմամբ քրգործեր են հարուցվում, հետապնդումներ իրականացվում:**

-Նրանք իրոք աշխատում են այդ ուղղությամբ, բայց կարծում եմ՝ Բագրատ սրբազանը կգտնի ձեւերը շարժումը թարմացնելու, քանզի դրա անհրաժեշտությունը կա: Հասարակության լայն զանգվածը ուրախ չէ, որ շարժումն անկում է ապրում:

**-Ի՞նչ պետք է արվի, որպեսզի բեկում մտցվի եւ թափ առնի ակցիան:**

-Հիմա այն փուլում ենք, որ խորհուրդ տալը հեշտ է, բայց արժե՞ արդյոք. վերջիվերջո, այմբողջ տեղեկատվությանը Բագրատ սրբազանն է տիրապետում, եւ նա կիմանա, թե ինչ ուղղությամբ գնա: Մենք որքան էլ ինչ-որ տեղեկության տիրապետում ենք, միեւնույնն է՝ դա ամբողջականը չէ, եւ այս մասնակի ինֆորմացիայով կանխատեսումներ անել գլոբալ գործընթացների մասին, ճիշտ չի լինի: Թուլացման պատճառը ես տեսնում եմ դրական լույսի ներքո, քանզի սրբազանը հոգեւոր գործիչ է եւ պատրաստ չէր քաղաքական վայրիվերումների եւ անդրադարձների:

**-Սրբազան, շատ խոսակցություններ են շրջանառվում, որ շարժման ներսում՝ անդամների միջեւ, տարաձայնություններ կան, ու հիմնական պատճառը այն է, որ շարժումն իր նպատակին, վերջնարդյունքին չի հասնում: Դուք նման տարաձայնություններ նկատե՞լ եք:**

-Ես ինքս այն աստիճան ընդգրկված չեմ, որպեսզի հստակ իմանամ՝ կա՞ն տարաձայնություններ, թե՞ ոչ, իմ շփումը միայն Բագրատ սրբազանի հետ է, հետեւաբար, թե ինչ խմորումներ են ընթանում ներսում, տեղյակ չեմ:

**-Սրբազան, այս պայքարի ընթացքում Բագրատ Գալստանյանը նաեւ տարբեր քաղաքներում եղավ, եւ այստեղ ակնհայտ էր, որ միայն Գուգարաց թեմի առաջնորդը եւ նաեւ Դուք եղաք, որ Շիրակ այցելելիս՝ որպես Շիրակի թեմի առաջնորդ, նրան դիմավորեցիք եւ Ձեր աջակցությունը հայտնեցիք, մյուս թեմերի առաջնորդները, ինչպես նաեւ վեհափառը, իրենց հստակ աջակցությունը շարժմանը չեն հայտնել, ինչո՞ւ:**

-Սա Բագրատ սրբազանի շարժումն է, որին աջակցում են որոշ հոգեւորականներ, որոշ հոգեւորականներ վերապահություն ունեն, եւ որոշ հոգեւորականներ էլ դեմ են, որպեսզի եկեղեցական գործիչը քաղաքականություն մտնի:

**-Ինչպես նշեցինք, իշխանությունները տարբեր ճնշումներ են կիրառում, քրեական գործեր հարուցում ակցիայի մասնակիցների դեն, այդ թվում՝ տեղեկություններ կան, որ Բագրատ սրբազանի դեմ եւս քրգործ են ուզում հարուցել, ի՞նչ կասեք այս մասին, սպասու՞մ եք նման զարգացումների, որ անգամ հոգեւորականների հետ այդպես կվարվեն:**

-Այս իշխանություններից ես ամեն բան սպասում եմ, ոչինչ չպետք է բացառել. եթե այս իշխանությունը կարողացավ մայիսի 28-ին արգելել Վեհափառ հայրապետի տեղաշարժը, ապա ամեն ինչի ընդունակ է, մեկ հոգեւորականն ի՞նչ է նրանց համար, որ չկարողանան որեւէ քրեական գործով դատապարտել....:

*Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ*

ԲՈՂՈՔ

# ԲՆԱԿԻՉՆԵՐԸ ԴԵՄ ԵՆ ՈՐՈՇՄԱՆԸ

**Մեկ օր առաջ՝ վաղ առավոտյան, Վարդենուտ գյուղի բնակիչները փակել էին Աղարան-Երեւան մայրուղին:**

Բնակիչները բողոքում են ՀՀ կառավարության 2023 թ. մարտի 2-ի որոշմամբ գյուղի հողերը գերական շահ ճանաչելու դեմ:

Վերոնշյալ որոշմամբ՝ «ՌԻԴ» ՍՊԸ կողմից ներկայացված՝ ամառային եւ ձմեռային զբոսաշրջային, լեռնադահուկային, էկոգյուղատնտեսական արտադրության կենտրոնի ստեղծման եւ ջրամբարի կառուցման «Արագած» ներդրումային ծրագիրը իրականացնելու նպատակով մի շարք հողամասեր հանրային գերակա շահ են ճանաչվել: Վարդենուտ գյուղի հողատարածքներից հանրային գերակա շահ է ճանաչվել 110 հա հողատարածք:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ՀՀ Արագածոտնի մարզպետ Սերգեյ Մովսիսյանը հայտնել է, որ ճանապարհն արդեն բաց է, իսկ պատճառը բնակիչների եւ «ՌԻԴ» ՍՊԸ-ի միջեւ անհամաձայնությունն է:

«Ինչ-որ կոնկրետ բան դեռ չենք որոշել, կքննարկենք, կհասկանանք, փաստաթղթերը կբերեն, դատարանի որոշումների հետ կապված կհասկանանք՝ ինչ ենք անում: Բնակիչները գումարը շատ են ուզում, իսկ կազմակերպությունն էլ ուզում է ֆիքսված գումարը տալ, որը քիչ է բնակիչների պահանջածից: Ֆիքսված գումարը տարբեր է, մինչեւ 300 դրամի կարգի է հողի գնահատված արժեքը: Բնակիչները տարբեր բաներ են ուզում՝ շատ գումար, մի մասը չի ուզում հողը վաճառել: Հողի կադաստրային արժեքն ավելի էժան է, սա գնահատված արժեքն է», - «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց ՀՀ Արագածոտնի մարզպետը:

Ըստ կառավարության ընդունած որոշման՝ սահմանվել է, որ ծրագիրն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի (Վարդենուտ, Արագած, Արայի եւ Շենավան բնակավայրեր) տարածքում 4489.0 հա ընդհանուր մակերեսով հողամասում: Ըստ մարզպետի՝ բանկիչները բացի ֆինանսական պահանջից այլ պահանջ չեն ներկայացրել մարզպետին:

Հիշեցնենք, որ Վարդենուտ գյուղի բնակիչների կողմից 2024 թվականի մարտի 10-ին եւս փակել էին մայրուղին, նրանք պահանջում էին դադարեցնել ընկերության կողմից Արագածի էկո-հագստավայրի կառուցումը, որի նախագծով գյուղի տարածքում լեռնադահուկային կոմպլեքս եւ ճոպանուղի է ստեղծվելու:

Նշենք, որ «ՌԻԴ» ընկերությունը պատկանում է ռուսաստանաբնակ գործարար Ռուբեն Գրիգորյանին:

Հիշեցնենք, որ ՀՀ կառավարությունը 2023 թվականի մարտի 2-ին հավանություն տվեց «ՌԻԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ ամառային եւ ձմեռային զբոսաշրջային, լեռնադահուկային, էկո-գյուղատնտեսական արտադրության կենտրոնի ստեղծման եւ ջրամբարի կառուցման «Արագած» ներդրումային ծրագրին: Որոշումն ընդունելուց 4 ամիս անց, սակայն, նախագծի վերաբերյալ կրքերը թեժացել են:

***Մանրամասները՝ ArmLur.am կայքում:***

*ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

## ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ադրբեջանի գլխավոր դատախազը խոսել է Բաքվում ապօրինաբար կալանավորված քաղաքական գործիչների քրեական գործերի վերաբերյալ:

«Քրեական գործերով քննչական գործողություններն ավարտվել են եւ առաջիկայում կուղարկվեն դատարան: 15 անձի վերաբերյալ նախաքննությունն արդեն ավարտվել է: Մեղադրյալները, փաստաբանները, տուժողները ներկայումս ծանոթանում են քրեական գործի նյութերին, ծանոթացման փուլն ավարտվելուց հետո՝ մեղադրական եզրակացությունը կուղարկվի դատարան», - ասել է նա:

ArmLur.am-ը փորձեց կապ հաստատել «Միջազգային եւ համեմատական իրավունքի հայկական կենտրոնի» նախագահ Սիրանուշ Սահակյանի հետ՝ հասկանալու համար՝ ինչ է անում հայկական կողմը, վերջինս պատասխանեց, որ վաղ է պատասխան քայլերի մասին խոսելը:

«Նախ նախաքննությունը ընթացքի մեջ է եղել, ընդամենը այս հաղորդագրությամբ նրանք ազդարարել են նախաքննության ավարտը, ինչը նշանակում է, որ մեր կողմից կանխատեսվող դատավարությունները կսկսվեն, կընթանան»:

Նրա խոսքով՝ մնում է հասկանալ դատավարությունների անցկացման կարգը՝ դռնփակ, դռնբաց, հանրայնացման աստիճանը եւ մի շարք այլ հանգամանքներ:

«Հայկական կողմի դիրքորոշումը այն է, որ ի սկզբանե ազատությունից զրկելը եղել է ապօրինի, այդ դատավարությունները ցուցադրական են, թե՛ նախկին թե՛ ներկա ռազմագերիների առնչությամբ չեն պահպանվում արդար դատաքննության իրավունքի կարեւոր տարրերը, այստեղ մենք կարեւոր խախտումների հետ ենք գործ ունենալու, եւ այդ դատավարությունների արդյունքները չեն կարող ընդունելի լինել միջազգայնորեն:

Սրան պետք է հավելենք նաեւ ընդհանուր դատական համակարգի ծայրահեղ վատ վիճակ է Ադրբեջանում, որը միջազգային կառույցների կողմից քննադատվում է քաղբանտարկյալներ ունենալու հարցով, բազմիցս արձանագրվել է հեռախոսային դատավարությունը եւ նախագահի վարչակազմում արդարադատություն իրականացնելու անթույլատրելի պրակտիկան, ուստի հայկական կողմը ընդամենը միջազգային մեխանիզմների գործարկմամբ պետք է նաեւ իրավական առումով չեզոքացնի դատական ակտերը»:

Սիրանուշ Սահակյանը կարծում է, որ զուգահետաբար պետք է աշխատանք տարվի, հիմնականում՝ դիվանագիտական եւ քաղաքական, որպեսզի Ադրբեջանը ազատ արձակի նաեւ ապօրինաբար բանտարկության վերցրած հայերին:

## ԻՐԱՎԻՃԱԿ

# ԹԱԹՈՅԱՆԸ՝ ԱԼԻԵՎԻ ԽՈՍՔԻ ՄԱՍԻՆ

«Ադրբեջանի նախագահը տարբեր է դարձրել իր խոսքը ներքին ու արտաքին լսարանների համար:

Ներքին լսարանին ուղղված նրա խոսքն ընդգծված ագրեսիվ է ու թշնամանական՝ի տարբերություն արտաքին լսարանի:

Նա թշնամանքի ներքին քարոզով ապահովում է իր քաղաքական կյանքի երաշխիքներ ու ստեղծում է իր համար «պատեհ» պահի Հայաստանի նկատմամբ ռազմական ագրեսիայի հիմքեր:

Իրականում, ադրբեջանական կողմից խաղաղության ձգտումը մոլորեցնող է, խաբկանք:

Այն արտաքին աշխարհին մոլորեցնելու համար է» - նշել է Արման Թաթոյանը:

# ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ 14–ՐԴ ՓԱԹԵԹԸ

Եվրամիությունը (ԵՄ) ընդունել է Ռուսաստանի դեմ պատժամիջոցների 14-րդ փաթեթը՝ ուղղված էներգետիկ, ֆինանսական եւ առեւտրային ոլորտներին: Այս մասին հայտնում է ԵՄ խորհրդի պաշտոնական կայքը:

«Փաթեթը ներառում է սահմանափակող միջոցներ եւս 116 ֆիզիկական եւ իրավաբանական անձի նկատմամբ», - ասվում է հաղորդագրությունում:

Եվրամիությունը սահմանափակումներ է մտցրել եվրոպական նավահանգիստներով ռուսական հեղուկացված բնական գազի տարանցման համար: Ըստ ԵՄ խորհրդի՝ միջոցառումներն ուղղված են վաճառքից եւ փոխադրումներից Ռուսաստանի եկամուտների կրճատմանը:

# ՈՐՈՇՈՒՄ՝ ԲԱՔՎՈՒՄ

Ադրբեջանի գլխավոր դատախազը խոսել է Բաքվում ապօրինաբար կալանավորված քաղաքական գործիչների քրեական գործերի վերաբերյալ:

«Քրեական գործերով քննչական գործողություններն ավարտվել են եւ առաջիկայում կուղարկվեն դատարան: 15 անձի վերաբերյալ նախաքննությունն արդեն ավարտվել է: Մեղադրյալները, փաստաբանները, տուժողները ներկայումս ծանոթանում են քրեական գործի նյութերին, ծանոթացման փուլն ավարտվելուց հետո՝ մեղադրական եզրակացությունը կուղարկվի դատարան»,-ասել է նա:

Հիշեցնենք, որ սեպտեմբերի 20-ին Արցախի օկուպացիոն փաստաթղթի ստորագրումից հետո արցախահայությունը սկսեց դուրս գալ Արցախից, այդ թվում՝ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարությունը: Բնակչության դուրս գալուց հետո՝ ռազմաքաղաքական ղեկավարության սահուն անցումը դեպի Հայաստանի Հանրապետություն չստացվեց. նրանք կալանավորվեցին ադրբեջանական ուժերի կողմից եւ տեղափոխվեցին Ադրբեջան, որտեղ էլ այս պահին գտնվում են:

Անցյալ շաբաթ Ռուբեն Վարդանյանի փաստաբանական թիմը հայտարարություն էր տարածել այն մասին, որ նրան բանտում բռնության են ենթարկել, որի առնչությամբ դիմել են միջազգային դատարան:

## ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

# ՇԱՐԺՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՈՒԺԵՂԱՑՆԵԼ

**Այլընտրանքային նախագծեր խմբի անդամ Վահե Հովհաննիսյանը գրում է. «Մի օր Էրդողանի հետ հեռախոսազրույցից հետո կանգնելու է Աժ ամբիոնին ու ասի. «Եթե մենք մի փոքր էլ իջեցնենք մեր նշաձողը, մեզ խոսք են տալիս անվտանգության միջազգային երաշխիքներ եւ կուրս փոր»:**

Թատերականացված պոռթկման ժամանակ ասելու է, թե 1991-ից անկախությունը որպես թոկ են մեր դեմ կիրառել՝ Ռուսաստանից կախված լինելու համար, իսկ հիմա մենք ունենք ինքնիշխանություն ձեռք բերելու հնարավորություն, եւ որ իր քաղաքական թիմն ունի մանդատ՝ ժողովրդին տանելու իրական ինքնիշխանության (Թուրքիայի տիրապետության տակ): Դահլիճի 60-քանիսը ծափ են տալու, Հ1-ի հայտնի տաղավարը սկսելու է քննարկումները՝ «կեղծ պետականությո՞ւն, թե՞ իրական ինքնիշխանություն» խորագրով, նախարարները, փոխնախարարները շարունակելու են դիմել «ՄԵԾԱՐԳՈ»-ով: Հասարակության զգալի մասը լռելու է՝ այդպես էլ չհասկանալով, թե ինչ է կատարվել: Իսկ հետո լինելու է Արցախի սցենարը՝ մասշտաբի փոփոխությամբ. 2 օրվա փոխարեն երկիրը կարող է դատարկվել 2 տարում: Նախկին, ներկա փողատերերը սահուն գաղթելու են իրենց դուբայներ, հունաստաններ, լոսեր եւ այլն: Գրին քարտ ունեցողները՝նույնը: Մենթալ խոպանչու մեր գենը բուռն ռեալիզացվելու է: Իսկ գիտե՞ք, թե Վրաստանի տարածքում ժամանակին պապ-տատ ունեցող քանիսն են այս ընթացքում հիշել իրենց «ծագումը» ու արագացված կարգով Վրաստանի քաղաքացիություն են ուզում ստանալ: Դոշակի տակից քանի՞ տասնյակ հազար ընտանիք է հանելու ռուսական անձնագիրը:

Երկրում մնալու են անճարները եւ մինչեւ վերջին վայրկյանը երկիրը փրկելու պատրաստ մարդիկ: Սա է ռեալ սցենարը, ոչ թե մի քանի գյուղի կամ նախկին-ներկա որոճվող թեման: Այս իրատեսական սցենարը թույլ չտալու համար, պետք է շարժումը ուժեղացնել: Բագրատ Սրբազանի ձեւակերպումն իր պարզությամբ ու ազնվությամբ սպառիչ է. «Շարժումը բաղկացած է քեզնից. եթե դու մարել ես, ուրեմն շարժումն էլ մարելու է»: Բանաձեւը փոխվում է. նրանք մարում են պետությունը, մենք պետք է ուժեղացնենք շարժումը: Բայց շարժումը ուժեղացնելու համար այն պետք է դառնա ավելի գրագետ՝ քաղաքական: Միայն քաղաքական բովանդակությունն ուժեղացնելու դեպքում է հնարավոր մեծացնել մեր ընտրազանգվածը, եւ դառնալ հասկանալի արտաքին խոշոր խաղացողների համար: Ադրբեջանը քաղաքական ծրագրով գնում է Հայաստանի ոչնչացմանը, մենք պետք է քաղաքական մեր ծրագրով խափանենք դա: Մնացածը չորրորդական է: Սրա չգիտակցումը կբերի պատմական խոշորագույն ողբերգության, ու այնքան արագ, որ չենք էլ հասկանա, թե ինչպես կատարվեց: Արցախը ամենավառ օրինակն էր. Հայաստանի քաղաքական միտքը եւ հասարակությունը 9-10 ամիս չհասկացան, թե ինչ է տեղի ունենում եւ ինչով է ավարտվելու: Հիմա նույնը Հայաստանի մասին է: Այն տարբերությամբ, որ եթե Արցախի ժամանակ մենք չէինք պատկերացնում, թե ինչով է դա ավարտվում, հիմա պատկերացնում ենք: Հերիք է պատմական դեբիլությամբ զբաղվել՝ «Ամերիկան չի թողնի», «Իրանը չի թողնի», «Ալիեւը ռիսկ չի անի»: Ամեն ինչ էլ կանեն, եթե մենք շարունակենք ապաքաղաքական զանգված մնալ: Այս իմաստով շարժումը չի կարող մարել. այն պետք է վերափոխվի: Կարող է փոխվել շարժման հարթակը, հրապարակի ծավալը, ձեւակերպումների առաջնահերթությունները, միջոցառումների ինտենսիվությունը եւ այլ շատ բաներ կարող են փոխվել: Ու դա նորմալ է: Բայց շարժման իդեան չի կարող ո՛չ փոխվել, ո՛չ մարել, եթե այն հստակ նպատակ ունի՝ պահել Հայաստանը: Սրան պետք է հաջորդի նպատակի քաղաքական ճանապարհային քարտեզը: Վրաստանի կառավարությունը պատմական դասագրքային օրինակ է՝ ինչպես պահել պետական շահը եւ չընկրկել պսեւդոեվրոպական հակապետականության առաջ: Իսկ մերն ընդհանրապես ավելի բարդ պատմություն է. մեզ Եվրոպայում ո՛չ սպասում են, ո՛չ՝ հրավիրում: Մեզ սպասում է միայն Ադրբեջանը, սպասում է մեր վերջին 1-2 սխալին, որ մեր պետականության թեման փակի: Այս հենց սա՛ չի հասկանում լայն հասարակությունը, նրա վերնախավերը, քաղաքական գործիչների զգալի մասը: Շարժումը պետք է հենց սա հասկացնի, ընդ որում՝ շատ արագ», - նշել է նա:

*ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ*

## ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

# ԱՎԵՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ ԱՃԵԼ Է

«Caucasus Heritage Watch»-ի կողմից հրապարակված հայկական մշակութային վայրերի մասին վերջին զեկույցը ցույց է տալիս, որ Լեռնային Ղարաբաղի տարածքում Ադրբեջանի թիրախում հայտնված մշակութային ժառանգության ավերածությունների թիվը 2023 թվականի աշնանից ի վեր աճել է 75%-ով:

«Caucasus Heritage Watch»-ի զեկույցում նշվում է, որ վավերացնելով փորձագետների նախազգուշացումները Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղում հայկական մշակութային ժառանգության ոչնչացման մասին՝ «Caucasus Heritage Watch»-ի նոր զեկույցը հաստատում է 75%-ով ավերված վայրերի աճը ողջ տարածաշրջանում՝ անցյալ տարի նրա բնիկ էթնիկ հայ բնակչության զանգվածային տեղահանումից հետո:

Զեկույցը հաղորդում է, որ ընդհանուր առմամբ, 2024 թվականի գարնանային մոնիտորինգի շրջանը բացահայտել է ազդեցության ենթարկված վայրերի ամենամեծ քանակությունը 2021 թվականի գարնանից ի վեր, երբ կազմակերպությունը սկսել է մշակութային ժառանգության մոնիթորինգը Լեռնային Ղարաբաղի 2020 թվականի պատերազմից հետո:

# ԱՇՈՏՅԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՆԻՍՏԵՐԸ՝ ԴՌՆՓԱԿ

Իրավապաշտպան Ռուբեն Մելիքյանը սոցցանցի իր էջում գրել է. «Հասանք հրապարակայնության սկզբունքի դե ֆակտո զրոյացմանը:

Դատախազի միջնորդությամբ՝ Աշոտյանի գործով դատարանը հանրությանը զրկեց ուղիղ եթերով վկաների հարցաքննությանը հետեւելու եւ սեփական «վճիռը» կայացնելու հնարավորությունից: Դատախազության այս միջնորդությունը ինքնին բավարար է՝ հաստատված ճանաչելու մեր բուն պնդումն այն մասին, որ սա դասական քաղաքական հետապնդում է:

ՀԳ. Մենք խստորեն առարկեցինք, բայց ակնհայտ էր, որ որոշումը կայացվել էր նախապես»:

# ՓՈԽԱՐԻՆՎԵԼ Է ԱՐՑԱԽ ԲԱՌՈՎ

Եթե մինչեւ վերջերս Գորիսի համայնքապետի, համայնքապետարանի պաշտոնական կայքի հրապարակումների համաձայն Արցախը գրվում էր Արցախի Հանրապետություն, ապա վերջերս, Սյունիքի երբեմնի թիկունքը դարձել է լոկ Արցախ:

Փաստորեն, 2023 թվականի՝ Առուշանյանի եւ Փաշինյանի «հուդայի համբույրը» տալիս է իր գործնական արդյունքները:

Իսկ ոչ սթափ մեքենա վարել եւ չկրել ոչ մի պատասխանատվություն՝ չէր կարող երազել նույնիսկ որեւէ «նախկին» հենց «նախկինների» ժամանակ:

Հ.Գ. Որոշ կարծիքների համաձայն՝ «Վերածնվող Հայաստան» կուսակցության վերջնական փլուզումը սկսվեց Նիկոլ Փաշինյանի եւ Առուշ Առուշանյանի 2023 թվականի գորիսյան հանդիպումից հետո:

ԻՆՉ Է ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ

# ՕԳՆԱԿԱՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԻՑԸ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԵՆ

**Մանվել Գրիգորյանի դատավոր դստեր օգնականը եւ ԱԱԾ նախկին աշխատակից կալանավորված են.**

Այս տարվա մարտի 26-ին հայտնել էինք, որ Արմավիրի մարզի դատավոր Նաիրա Գրիգորյանի օգնականին կալանավորել են:

ՀՀ քննչական կոմիտեից նշել էին, որ անձին ներկայացվել է մեղադրանք՝ առանձնապես խոշոր չափերով խարդախություն կատարելուն օժանդակելու համար:

Օրերս ՀՀ քննչական կոմիտեն մանրամասներ հայտնեց խարդախության գործով, որի պարագլուխը եղել է ԱԱԾ նախկին աշխատակից:

Մասնավորապես՝ Կոտայքի մարզի 32-ամյա բնակիչը 2022թ. ստեղծել է հանցավոր կազմակերպություն: Խմբի գործողությունները հաջողությամբ քողարկելու եւ դրա բացահայտումն անհնարին դարձնելու նպատակով 32-ամյա տղամարդը նրանց հետ կապն ապահովել է համացանցային տարբեր հավելվածների միջոցով, հանցավոր կազմակերպության մասնակիցներին տվել է երաշխիքներ եւ խորհուրդներ՝ իրենց կատարած հանցանքների համար քրեական պատասխանատվությունից խուսափելու մեխանիզմների վերաբերյալ:

Ըստ նախաքննական մարմնի՝ 2022-2023թթ. ընթացքում հանցավոր կազմակերպության անդամները պատրաստել եւ օգտագործել են կեղծ անձնագրեր, ամուսնության կեղծ վկայականներ, իբրեւ թե ՌԴ-ում տարբեր նոտարների կողմից վավերացված կեղծ լիազորագրեր եւ տեղեկանքներ: Հանցավոր կազմակերպության անդամները դրանք օգտագործել են պետական տարբեր մարմիններում՝ դատական ատյաններում եւ խարդախության եղանակով հափշտակել են չորս անշարժ գույք՝ բնակարաններ, որոնցից 3-ը՝ Էջմիածին քաղաքում, 1-ը՝ Երեւանում՝ հիմնականում թիրախավորելով կենդանության օրոք միայնակ բնակված տարեց եւ ժառանգ չունեցող անձանց:

Հանցավոր ճանապարհով ձեռք բերված անշարժ գույքերը խմբի անդամները վաճառել են:

Այնուհետեւ, հանցավոր կազմակերպության անդամները, առանձին դեպքերում տեղեկանալով թիրախավորված բնակարանների սեփականատերերին սեփականության իրավունքով պատկանող գույքի վերաբերյալ կտակի առկայության մասին, այդ անշարժ գույքը խաբեության եղանակով հափշտակելու նպատակով, կեղծ լիազորագրերի հիման վրա հանդես են եկել որպես տուժողների ներկայացուցիչներ եւ իրավասու մարմիններ ներկայացնելով այդ կեղծ փաստաթղթերը՝ նրանց անունից կատարել են սեփականության գրանցման եւ գույքի օտարման գործարքներ:

Մեկ դեպքում, մասնավորապես, դատավորի օգնականի օժանդակությամբ, (նախաքննական մարմինը օգնականի անունը չէր նշել, սակայն խոսքը գեներալ Մանվել Գրիգորյանի դստեր՝ Արմավիրի մարզի դատավոր Նաիրա Գրիգորյանի օգնականի մասին է) հանցավոր խմբի անդամներն անշարժ գույքի իրական ժառանգներ հանդիսացող անձանց կողմից, իբրեւ ժառանգությունից հրաժարվելու վերաբերյալ նոտարական վավերացմամբ կեղծ դիմումի հիման վրա առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ներկայացրել են փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու փաստի հաստատման պահանջի մասին դիմում՝ որպես ապացույց ներկայացնելով նաեւ համայնքապետարանի կոմունալ վարչության պետի անվամբ կազմված եւ հաստատված կոմունալ վճարումներն իբրեւ կատարված լինելու վերաբերյալ կեղծ տեղեկանքներ:

Քննությամբ ձեռք բերված տվյալներով՝ հափշտակությունների հետեւանքով քաղաքացիներին պատճառվել է ընդհանուր 52.162.500 ՀՀ դրամի վնաս:

Բոլոր մեղադրյալների նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը: Նախաքննությունը նշված 7 անձանց մասով ավարտվել է:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

## ՉԻ ԵՆԹԱՐԿՎԵԼ ՀՐԱՀԱՆԳԻՆ

Հունիսի 23-ին ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության էրեբունու բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի ծառայողները պարզել են «Nissan Teana» մակնիշի ավտոմեքենայի վարորդի ինքնությունը, որն Արին Բերդի փողոցում չէր ենթարկվել պարեկների օրինական «կանգ առ» հրամանին, դիմել էր փախուստի՝ հարվածելով պարեկային ծառայության ավտոմեքենային, ապա մոտ 5 կմ պարեկների կողմից հետապնդվելուց հետո՝ Մանթաշյան 41 հասցեի դիմաց բախվել էր «Opel» մակնիշի ավտոմեքենային:

Իրավապահները պարզել են, որ «Nissan»-ը վարել է Երեւանի բնակիչ 23-ամյա Էմիլ Մարկոսյանը, որը նախ բերման էր ենթարկվել ոստիկանության Շենգավիթի բաժին, որտեղից նրան այնուհետեւ տեղափոխել էին ոստիկանության Էրեբունու բաժին, իսկ այնտեղից էլ նրան ներկայացրել էին Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժին, որտեղ քննիչի որոշմամբ նա ձերբակալվել է:

Դեպքի վայրում լրացուցիչ զննության արդյունքում իրավապահները հայտնաբերել էին 3-րդ կրակված պարկուճը: Քննիչի հանձնարարականով՝ վթարված «Nissan»-ը տեղափոխվել է հատուկ պահպանվող տարածք:

Ինչպես ավելի վաղ դեպքի վայրից հայտնել էր ֆոտոլրագրողը, հունիսի 23-ին դետեկտիվ ժանրի հետապնդում եւ կրակոցներ էին հնչել Երեւանում: Ժամը 14:30-ի սահմաններում ՀՀ Ներքին գործերի նախարարության Ոստիկանության Պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի 2-րդ գումարտակի պարեկը կասկածանքով Արին Բերդի փողոցում փորձել էր կանգնեցնել «Nissan Teana» մակնիշի ավտոմեքենան, սակայն վարորդը չէր ենթարկվել պարեկի օրինական կանգառ հրահանգին, դիմել էր փախուստի՝ հարվածելով պարեկային ծառայության ավտոմեքենային:

Հետապնդման ընթացքում պարեկի կողմից կրակոց էր արձակվել «Nissan Teana»-ի առջեւի ձախ անվադողի վրա, իսկ երբ «Nissan»-ը բախվել էր պարեկային ավտոմեքենային, ավտոմեքենայի անվտանգության բարձիկը բացվել էր, ինչի պատճառով էլ 1 կամ 2 պարեկ տեղափոխվել էին հիվանդանոց:

Արին Բերդի փողոցում էլ հայտնաբերվել էր կրակված 2 պարկուճ:

## ԴԱՆԱԿԱՀԱՐԵԼ ԵՆ 2 ԵՂԲԱՅՐՆԵՐԻ

Հունիսի 23-ին Սարի թաղի 3-րդ փողոցում թեժ վիճաբանություն է եղել, երկու եղբայրների են դանակահարել:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ հիվանդանոց են տեղափոխվել 20 տարեկան Ն.Մ.-ն եւ 25-ամյա Է.Մ-ն:

Նույն օրը վերոնշյալ փողոցում «Ֆոլկսվագեն»-ը բախվել է «Մերսեդես»-ին, որից հետո՝ վիճաբանության ժամանակ, երկու եղբայրների դանակի հարվածներ են հասցրել:

Ձեռնարկվում են միջոցառումներ՝ դանակահարողին հայտնաբերելու ուղղությամբ, նրա ինքնությունը հայտնի է: Իրավապահները պարզել են, որ Ն. եւ Է.Մ.-երը եղբայրներ են, Ն.Մ.-ի վնասվածքը մեջքի հատվածում է, իսկ Է.Մ.-ինը՝ ոտքի: Բժիշկները եղբայրների վիճակները բավարար են գնահատել:

*Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ԼՈՒՐԵՐ

## ԱԲՐԱՀԱՄ ԳԱՍՊԱՐՅԱՆԸ ՏՈՒԺՈՂ Է ՃԱՆԱՉՎԵԼ

Հունիսի 12-ին՝ Բաղրամյան պողոտայում՝ ԱԺ շենքի մոտ տեղի ունեցած ակցիայի ժամանակ, ոստիկանությունն անհամաչափ ուժ, բռնություն էր կիրառել խաղաղ հավաքի մասնակիցների նկատմամբ, ինչի հետեւանքով շուրջ 101 անձ ստացել էր տարբեր մարմնական վնասվածքներ, քաղաքացիներից մեկը կիրառված հատուկ միջոցների հետեւանքով կորցրել էր դաստակը: Տուժել էին նաեւ շուրջ մեկ տասնյակ լրագրողներ եւ օպերատորներ, վնասվել էր ՁԼՄ-ներին պատկանող գույքը, առերեւույթ թիրախավորված բռնության էր ենթարկվել լրագրող Աբրահամ Գասպարյանը:

ՔԿ մամուլի քարտուղար Գոռ Աբրահամյանը «Փաստինֆո»-ին հայտնել է, որ հաղորդման առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ, որը միացվել է հունիսի 12-ին ԱԺ-ի մոտ տեղի ունեցած իրադարձությունների ընթացքում ոստիկանության գործողությունների իրավաչափությանն առնչվող քրեական վարույթին:

«Ա. Գասպարյանը ճանաչվել է տուժող եւ նրա հետ կատարվել է համապատասխան քննչական գործողություն», - ասել է Աբրահամյանը:

## ԴԱՆԱԿԱՀԱՐՎԱԾԸ ՀԻՎԱՆԴԱՆՈՑՈՒՄ ՄԱՀԱՑԵԼ Է

Հունիսի 21-ին՝ ժամը 16:21-ին ՆԳՆ ոստիկանության Արարատի մարզի օպերատիվ կառավարման կենտրոն հաղորդում է ստացվել, որ Վեդի քաղաքի Կասյան փողոցից կրծքավանդակի ձախ կեսի վնասվածքով բուժօգնության է տեղափոխվել նույն փողոցի բնակիչ 61-ամյա տղամարդ:

Ոստիկանության Արարատի բաժնի ծառայողներն ու մարզի պարեկները պարզել են, որ ժամը 15:55-ի սահմաններում Կասյան փողոցի շենքերից մեկի բակում անձնական հարցերի շուրջ վիճաբանել են հիվանդանոց տեղափոխվածն ու նույն փողոցի բնակիչ 71-ամյա տղամարդը, որի ընթացքում էլ 71-ամյա տղամարդը դանակահարել է 61-ամյա հարեւանին:

Հետագա միջոցառումներով 71-ամյա տղամարդը հայտնաբերվել, ձերբակալվել եւ կազմված փաստաթղթերի հետ ներկայացվել է Վեդիի քննչական բաժին:

Հունիսի 22-ի գիշերը՝ ժամը 2:18-ին, հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ 61-ամյա տղամարդը մահացել է:

Կատարվում է նախաքննություն: Հանգամանքները պարզվում են:

Ծանուցում. ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունիսի 21-ից 24-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 183 դեպք, որից 4-ը՝ նախկինում կատարված:*

# ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

## ՆՈՐ ԿԱՄՈՒՐՋԸ ՊԱՏՐԱՍՏ ԿԼԻՆԻ 10–15 ՕՐԻՑ

Միջպետական ավտոճանապարհը Խաշթառակ գյուղին կապող կամուրջը մայիսի 26-ի ջրհեղեղից վնասվել է, այդ հատվածով երթեւեկն արգելված է: Կամուրջը նաեւ Խաշթառակի հարեւան Լուսահովիտ գյուղն էր արտաքին աշխարհին կապում. թեեւ կամուրջը չի քանդվել, կանգուն է, սակայն այն խիստ վթարային է, դրանով երթեւեկը խստիվ արգելված է: Իջեւանի համայնքապետարանը Խաշթառակը Իջեւան քաղաքին կապող այլընտրանքային ճանապարհ է բացել: Այդ աշխատանքների շնորհիվ Խաշթառակից 7 կմ անցնելուց հետո՝ հասնում են Իջեւան քաղաքի «Ռեմբազի թաղ»: Համայնքապետարանն աշխատանքներ է կատարում հողային այդ ճանապարհը բարեկարգելու, հարթեցնելու համար: Խաշթառակի վարչական ղեկավար Անդրանիկ Վիրաբյանն ասաց, որ խաշթառակցիների մեծամասնությունը այժմ գերադասում է ավտոմեքենայով հասնել վնասված կամուրջ, ոտքով անցել այն, կամրջի մյուս կողմում նստել Իջեւանից պատվիրած ավտոմեքենան: Խաշթառակի վարչական ղեկավարը հայտնեց, որ 10-15 օր հետո պատրաստ կլինի ջրհեղեղից վնասված կամրջից փոքր-ինչ ներքեւ կառուցվող, մոտ 60 տոննա ծանրություն կրելու ունակ, 6 մետր լայնություն ունեցող կամուրջը, որը կառուցվում է բետոնե հենքի վրա, մետաղյա վերնամասով:

## ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐ ԵՆ ՆԵՐԿՐՎՈՒՄ

Նոյեմբերյան համայնքի Դեբեդի հովտի այգեգործները դժգոհում են, որ վերջին տարիներին մեծ չափով ավելացել են Հայաստան մտնող բույսերի վնաստուների քանակը եւ տեսականին: Դրանք Հայաստան են ներկրվում Վրաստանից, կամ Վրաստանի տարածքով այլ երկրներից ներմուծվող բույսերի, տնկիների, սերմերի, մրգերի միջոցով: Բագրատաշենի մաքսակետում, ինչպես այլ մաքսակետերում, գործում է ֆիտոսանիտարիայի ծառայություն, անհրաժեշտ փաստաթղթերը լրացվում են, սակայն բույսերի եւ բուսական ապրանքների վնասատուների Հայաստան մուտքը կանխարգելելու, դրանց չեզոքացնելու աշխատանքները հաճախ ձեւական բնույթ են կրում: Դեբեդի հովտի այգեգործներն ասում են, որ Բագրատաշենի մաքսակետով Հայաստան ներկրվող տնկիները պետք է մաքսակետում կարանտին անցնեն, սահմանային անցակետում որոշակի ժամանակ փակ խցերում մնան, որպեսզի պարզվի՝ դրանք առողջ են, թե ոչ, սակայն դա չի արվում: Բույսերի եւ բուսական արտադրանքի վարակվածության դեպքում պետք է կատարվի ֆումիգացիա՝ փակ տարածքում վնասատուների դեմ պայքար, որը թունավոր գազի միջոցով վերացնում է վնասատուներին: Վերջին տարիներին Տավուշի եւ Լոռու մարզում բույսերի վնասատուների քանակի, տեսականու աճը հետեւանք է նաեւ այն բանի, որ վաճառվող բուժանյութերը հաճախ անորակ են, վնասատուների դեմ դրանցով պայքարն արդյունք չի տալիս: Բուժանյութեր վաճառողները, հաճախ այդ գործից անտեղյակ, «ոչ մասնագետներ» են, որոնք չեն կարողանում այգեգործներին հայտնել, թե արտերկրից ներկրված տվյալ բուժանյութը ինչպե՞ս, որքա՞ն դոզաներով պետք է օգտագործել, որպեսզի այն արդյունավետ լինի:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

ԼԱՅՊՑԻԳԻ՝ ԳՐՔԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ-ՏՈՆԱՎԱՃԱՌ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՆ Է ՔՆՆԱՐԿՎԵԼ

**ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը ԳԴՀ կատարած աշխատանքային այցի շրջանակում հանդիպել է Լայպցիգի քաղաքապետ Բուրքարդ Յունգի հետ, քննարկել առկա եւ հնարավոր համագործակցությունը: Այս մասին հայտնում են ԿԳՄՍ նախարարությունից:**

Հանդիպմանը մասնակցել է նաեւ Լայպցիգի գրքի ցուցահանդես-տոնավաճառի տնօրեն Աստրիդ Բյոհմիշը: ՀՀ պատվիրակության կազմում են ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության եւ սպորտի մշտական հանձնաժողովի նախագահ Սիսակ Գաբրիելյանը եւ Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանը:

Հանդիպման ընթացքում կարեւորվել է երկկողմ կապերի զարգացումը: Այս համատեքստում շեշտվել է, որ Երեւանն ու Լայպցիգը հանդիսանում են քույր քաղաքներ, ինչը համագործակցությունը խորացնելու նոր հնարավորություններ է ստեղծում: Մասնավորապես, կարեւորվել է Երեւանի եւ Լայպցիգի բարձրագույն, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների, ինչպես նաեւ հանրկրթական դպրոցների միջեւ ուղիղ կապերի ստեղծումը: Քննարկվել են փոխանակման ծրագրերի իրականացման եւ համատեղ միջազգային կրթական ծրագրերի դիմելու հնարավորությունները:

Հանդիպմանը քննարկվել է նաեւ Լայպցիգի գրքի ցուցահանդես-տոնավաճառին Հայաստանի հնարավոր մասնակցության հարցը: ԿԳՄՍ նախարարը գերմանական կողմին հրավիրել է Հայաստան՝ սեպտեմբերին կայանալիք Գրքի երեւանյան միջազգային փառատոնին՝ քննարկելու համագործակցության հեռանկարները: Անդրադառնալով մշակույթի ոլորտում համագործակցությանը՝ կողմերը քննարկել են համատեղ համերգների անցկացման, երիտասարդ կատարողների համար համապատասխան հարթակների ձեւավորման եւ այլ հարցեր:

Քննարկվել է նաեւ հայ մեծանուն գրող Ավետիք Իսահակյանի՝ Լայպցիգում ուսանելու տարիներին զբաղեցրած բնակարանի բակում հուշատախտակ տեղադրելու հնարավորությունը:

ՀՀ պատվիրակությունն այցելել է նաեւ Լայբնից գիտահետազոտական ինստիտուտի Արեւելյան Եվրոպայի պատմության եւ մշակույթի ինստիտուտ (GWZO), փոխտնօրեն Յուլիա Հերցբերգի ուղեկցությամբ շրջել ինստիտուտում, ծանոթացել վերջինիս գործունեությանը եւ ենթակառուցվածքներին: Կողմերը քննարկել են համատեղ կրթաթոշակային ծրագիր ունենալու հնարավորությունը՝ հայագիտական հետազոտությունների ուղղությամբ: ԿԳՄՍ նախարարն առաջարկել է նաեւ դիտարկել գերմանացի եւ հայ հետազոտողների՝ Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի՝ արտերկրի գիտնականների համար նախատեսված ծրագրերին համատեղ մասնակցության հնարավորությունը:

Լայպցիգում ԿԳՄՍ նախարարի գլխավորած պատվիրակությունը հանդիպել է նաեւ փոխքաղաքապետ, Երիտասարդության, դպրոցների եւ ժողովրդավարության բաժանմունքի ղեկավար Վիկի Ֆելթհաուսի հետ: Քննարկվել են երիտասարդների փոխանակման, ինչպես նաեւ ԿԳՄՍ նախարարին կից աշակերտական խորհրդի եւ Լայպցիգի երիտասարդական կազմակերպություններից մեկի միջեւ համագործակցության հնարավորությունները՝ փոխադարձ այցերի եւ այլ ծրագրերի իրականացման տեսանկյունից:

Գերմանական կողմը նաեւ հետաքրքրվել է տեխնոլոգիական կրթության ուղղությամբ հայաստանյան փորձով, մասնավորապես՝ ԹՈՒՄՈ ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի, ԱՐՄԱԹ լաբորատորիաների, ՔՈԱՖ կենտրոնների գործունեությամբ, ինչպես նաեւ դպրոցներում Շախմատ առարկայի դասավանդմամբ:

Երիտասարդական քաղաքականության ուղղությամբ համագործակցության հեռանկարները քննարկվել են նաեւ ԵԽ որակի հավաստագիր ունեցող երիտասարդական կենտրոնների հետ: Մասնավորապես, քննարկվել է ՀՀ-ում բացվող երիտասարդական կենտրոնների հետ համագործակցությամբ փոխանակման եւ կարողությունների զարգացման ծրագրերի իրականացմանը վերաբերող հարցեր: ԿԳՄՍ նախարարը նշել է, որ ՀՀ երիտասարդական քաղաքականության առաջնահերթություններից են եվրոպական երիտասարդական կենտրոնների ցանցի հետ համագործակցությունն ու կապերի սերտացումը, որը նաեւ կնպաստի կարողությունների բարելավմանը:

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանն այցելել է նաեւ Սաքսոնիայում ՀՀ պատվո հյուպատոսություն, հանդիպել Սաքսոնիա-Անհալթ երկրամասի վարչապետ Միխաել Կրեչմերիի հետ:

*ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ*

ԱՀԱՔԱՆԳԵՐ

## ՀՈՍԱՆՔԱԶՐԿՈՒՄՆԵՐ՝ ԴԱՎԹԱՇԵՆՈՒՄ

**«Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն տարբեր բաղաքացիներից ահազանգեր են ստացվում այն մասին, որ իրենց վարչական շրջանում կա՛մ հոսանքազրկումներ են լինում, կա՛մ հոսանքն ակտիվ տատանվում է:**

Օրինակ՝ Դավթաշեն վարչական շրջանի 4-րդ թաղամասի 2/9 շենքում հոսանքի պարբերաբար անջատումներ են լինում, եւ այդ անջատումների պատճառով փչացել են որոշ բնակիչների կենցաղային տարբեր սարքեր, 16 թաղամասում երեկ հոսանք չի եղել, իսկ «Հույսի ավան» թաղամասում՝ պարբերաբար հոսանքազրկումներ են լինում:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ է հաստատել ՀԷՑ-ի հետ՝ պարզելու՝ ի՞նչն է պատճառը հոսանքազրկումների եւ/կամ տատանումների:

ՀԷՑ-ից պարզաբանեցին, որ ենթակայանում վերակառուցման աշխատանքներ են կատարվում, եւ այդտեղ փոխանջատումներ են կատարվել, ինչի պատճառով էլ բնակիչներին թվում է, որ դա տատանում է:

«Դավթաշենի նշված հասցեում 1 վթար ենք ունեցել ամսի 20-ին, իսկ մնացածը, որ ասում են՝ անընդհատ անջատվում է, ենթակայանում իրականացվող վերակառուցման աշխատանքները նկատի ունեն, այդտեղ փոխանջատում ենք կատարել, դրա համար բնակիչներին թվում է, որ դա տատանում է, բայց իրականում տատանում չէ, այլ փոխանջատում: Այսինքն՝ անջատում եւ մեկ ուրիշ տեղից ենք միացնում հոսանքը, դա կարող է 1 կամ 2 րոպե տեւել, եւ դրանից ոչ մի տեխնիկա չի կարող վնասվել: Այսինքն՝ այդտեղ լարման եւ շեղման խնդիր չկա: Տեխնիկան փչանում է միայն այն ժամանակ, երբ լարման շեղում է գրանցվում: Հույսի ավան թաղամասն ու 16 թաղամասը Դավթաշեն վարչական շրջանի ենթակայանից են սնվում, այդտեղ ամսի 21-ին ենք ունեցել միայն 1 վթարային անջատում, որը տեւել է մոտավորապես 1-2 ժամ», - ասացին ՀԷՑ-ից:

ՀԷՑ-ից նաեւ հավելեցին, որ այնուամենայնիվ, եթե ինչ-որ բնակչի տանը ինչ-որ կենցաղային սարք է վնասվում, բնականաբար, եթե դա լարման շեղման արդյունքն է, ապա ՀԷՑ-ը փոխհատուցում է վնասները, սակայն այս պարագայում, մասնագետների փոխանցմամբ, տեխնիկա վնասվել չէր կարող:

*ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ*

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 46 պատահար. 6 մարդ զոհվել է, 61-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՈՉ ՖՈՐՄԱԼ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության հարկման նպատակով թափանցիկության եւ տեղեկությունների փոխանակման գլոբալ ֆորումի Ասիական նախաձեռնության 6-րդ բարձրաստիճան հանդիպումից առաջ՝ հունիսի 23-ին, տեղի է ունեցել ոչ ֆորմալ հանդիպում:

ՊԵԿ նախագահ Ռուստամ Բադասյանը, նաեւ որպես Ասիայի նախաձեռնության համանախագահ, Հայաստանի ազգային պատկերասրահում հյուրընկալել է Երեւան ժամանած հյուրերին:

ՊԵԿ նախագահը, ողջունելով ներկաներին եւ նշանավորելով արդյունավետ ու ոգեշնչող հանդիպման սկիզբը, եւս մեկ անգամ վերահաստատել է միջոցառման կարեւոր առաքելությունը՝ ամրապնդելու բոլորի հավաքական ջանքերը՝ ուղղված հարկային թափանցիկության եւ համագործակցության բարձրացմանը ամբողջ տարածաշրջանում:

«Մենք հավաքվել ենք Հայաստանի ազգային պատկերասրահում եւս մեկ անգամ ամրապնդելու մեր ջանքերն ուղղված հարկային թափանցիկության բարձրացմանը եւ Ասիայի տարածաշրջանում տեղեկատվության փոխանակմանը: Ես համոզված եմ, որ առաջիկա երկու օրերի ընթացքում փոխանակած մտքերն ու պատկերացումները ճանապարհ կհարթեն հարկային թափանցիկության օրակարգի ամրապնդմանն Ասիայի տարածաշրջանում: Մինչ մենք սկսենք մեր աշխատանքային օրակարգը, ես ուրախ եմ դիմավորել եւ ողջունել ձեզ Հայաստանի ազգային պատկերասրահում եւ հուսով եմ, որ դուք կգնահատեք ձեզ շրջապատող արվեստը: Մեզ բոլորիս մաղթում եմ հաջողություն Ասիական նախաձեռնության 6-րդ բարձրաստիճան հանդիպմանն ընդառաջ», - ասել է ՊԵԿ նախագահ Ռուստամ Բադասյանը:

Ասիական նախաձեռնության 6-րդ բարձրաստիճան հանդիպումն անցկացվում է Հայաստանում, հունիսի 24-ից 25-ը, Երեւանում:

ՊԵԿ տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժին

### ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ի փոփոխություն «Բի Էս Թի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ «Ժողովուրդ» օրաթերթի 05.12.2023թ. թիվ 173 (2839) համարի 6-րդ էջում տպագրված «Աճուրդի մասին հրապարակային ծանուցման»՝ տեղեկացնում ենք, որ ծանուցման մեջ նշված՝ ՀՀ, Շիրակի մարզ, համայնք Ախուրյան, գյուղ Ախուրյան, Հ. Շահբազյան փողոց, 10 հասցեում գտնվող 135,96 քմ բնակելի տան, 37,8 քմ անասնաշենքի, 44,89 քմ մառանի եւ 0,103 հա հողամասի աճուրդային փուլերը շարունակվելու են 01.07.2024թ.-ից, 18000000 ՀՀ դրամ մեկնարկային գնով՝ «Աճուրդի մասին հրապարակային ծանուցման» մեջ նշված ընթացակարգով: Աճուրդի ավարտը՝ 30.12.2024թ.:

«Աճուրդի մասին հրապարակային ծանուցման» մյուս դրույթները մնում են անփոփոխ:

ԾՐԱԳՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ Գ

# «ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ (ԱԲ) ՍԵՐՈՒՆԴ»

**Երեկ Հայաստանի գիտության եւ տեխնոլոգիաների հիմնադրամը (FAST) անցացրեց «Արհեստական բանականության (ԱԲ) սերունդ» ծրագրի դպրոցական բաղադրիչի 2023-2024 ուսարվա արդյունքների ամփոփիչ արարողությունը:**



Միջոցառմանն ամփոփվել են 2023-ի սեպտեմբերից ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ համատեղ ՀՀ 7 մարզի 15 ավագ դպրոցներում փորձարկվող «ԱԲ սերունդ» ծրագրի առաջին ուստարվա արդյունքները՝ մեկ հարկի տակ հավաքելով ծրագրում ներգրավված գործընկեր կառույցների ներկայացուցիչներին, ուսուցիչներին, վերապատրաստողներին եւ աշակերտներին:

Բացման խոսքով հանդես եկան ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, ՀՀ ԲՏԱ նախարարի տեղակալ Ռուբեն Սիմոնյանը եւ FAST-ի Ռազմավարական ծրագրերի փոխնախագահ Սյուզաննա Շամախյանը: FAST-ի կրթական ծրագրերի թիմը ներկայացրեց «ԱԲ սերունդ»-ում ընդգրկված ավելի քան 350 աշակերտի ձեռքբերումները, անցած ուսումնական ուղին, ինչպես նաեւ բոլոր այն համագործակցությունները, որ իրականություն են դարձել ոլորտային կառույցների աջակցությամբ:

Միջոցառման երկրորդ կեսում «Այբ» կրթական հիմնադրամի հետ միասին ամփոփվեցին հիմնադրամի հետ գործընկերության շրջանակում իրականացված Ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման արդյունքները՝ եզրափակվելով ուսուցիչներին հավաստագրերի հանձնման հանդիսավոր արարողությամբ:

Ներկաները հնարավորություն ունեցան նաեւ ծանոթանալու ծրագրի մասնակից 15 ավագ դպրոցների աշակերտների նախագծային աշխատանքներին, որոնք ցուցադրված էին միջոցառման էքսպո անկյունում:

Վստահ ենք, (խմբ. Fast հիմնադրամի մասին) որ Ձեր ներկայությունը կնպաստի ծրագրի տեսանելիության մեծացմանը եւ կօգնի ավելի մեծ թվով սովորողների հասանելի դարձնելու նորարարության եւ արհեստական բանականության ուղղությամբ այս անվճար կրթական հնարավորությունը, որն իր շարունակությունն է ստանալու նաեւ հաջորդ ուսումնական տարում:

FAST հիմնադրամը ստեղծվել է 2017 թվականին Հայաստանում տեխնոլոգիական նորարարությունն ու գիտական առաջընթացը խթանելու համար նպաստավոր էկոհամակարգ ստեղծելու նպատակով:

Այս նպատակով հիմնադրամն իրականացնում է տարբեր նախագծեր, որոնք ուղղված են երեք կարեւոր հիմնասյուներում՝ կրթություն, գիտություն եւ գիտական արդյունքի առեւտրայնացում, խորքային փոփոխություններ բերելուն: Իր գործունեության վեց տարվա ընթացքում հիմնադրամն իրականացրել է 26 ծրագիր ավելի քան 12 հազար շահառուի համար:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ Գ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ Ի-ԻՆ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ՎԵՆԵՏԻԿԻ ԲԻԵՆԱԼԵԻՆ

Հունիսի 17-ին Վենետիկի AKNEYE ֆիջիթալ տարածքում տեղի ունեցավ բացառիկ միջոցառում: ՀՀ ԿԳՄՍ նախարարության, Սարյանի տուն-թանգարանի, «ՍԱՐԵՐ» մշակութային ՀԿ-ի եւ Ազգային պատկերասրահի աջակցությամբ Fastex-ի AKNEYE նախագիծն իրականացրել է կարեւոր միջոցառում, որի ընթացքում ներկաները պատմել են, թե ինչպես մեկ դար առաջ Մարտիրոս Սարյանի ջանքերով Հայաստանը մասնակցել է Վենետիկի 14-րդ բիենալեին՝ ցուցադրելով հայ 6 նկարչի 20 ստեղծագործություն: Օլգա Պեւզները «վերստեղծել է» հայկական պատը, եւ նկարները թվային տարբերակով ցուցադրվել են սրահում՝ նոր շունչ հաղորդելով արվեստի գործերին:

Ելույթ են ունեցել ԿԳՄՍ նախարարության ժամանակակից արվեստի վարչության պետ Սվետլանա Սահակյանը, Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանի տնօրեն Բելլա Իսահակյանը, «ՍԱՐԵՐ» մշակութային ՀԿ-ի հիմնադիր-նախագահ Էռնա Ռեւազովան, Ազգային պատկերասրահի տնօրեն Մարինա Հակոբյանը եւ այլք: Ներկա էին Վենետիկի Կա՛ Ֆոսկարիի համալսարանի պրոֆեսոր Սոնա Հարությունյանը, հյուրեր հյուպատոսարանից եւ բիենալեի կազմակերպչական թիմից:

Fastex-ի գլխավոր գործադիր տնօրեն Վախթանգ Ամբրահամյանն անդրադարձել է ընկերության՝ հայ արվեստը եւ մշակույթը մշտապես կարեւորելու եւ տարատեսակ նախագծերով դրանց աջակցելու պատրաստակամությանը. ««Ֆասթեքսը», որպես տեխնոլոգիական ընկերություն, փորձում է, ըստ էության, համատեղել տեխնոլոգիան եւ արվեստը: Ուրախ ենք, որ իրականացրինք այս նախագիծը՝ մեր մեծերից մեկի՝ Սարյանի արվեստը ներկայացնելով նորովի՝ թվային տեսքով», - նշել է նա:

Ելույթներին հետեւել է այդ ամենի մասին վկայող «Սարյանն ու Վենետիկը» վավերագրական ֆիլմի փակ ցուցադրությունը, որի ամբողջական տարբերակը հնարավոր է տեսնել այս հղումով:

## «ԿՈՆՎԵՐՍ» ԲԱՆԿ. ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

Պորկետտա ընկերությունը հիմնադրվել է 2020 թվականին՝ շուկայում ոչ թե քանակական, այլ որակական փոփոխությունների մտադրությամբ: Այդ իսկ պատճառով էլ արտադրության կազմակերպման հիմքում դրվել է ճշտապահությունը, խիստ վերահսկողությունը խոզի մսի արտադրության յուրաքանչյուր փուլի նկատմամբ:

«Խոզի մսի որակի ապահովումն ու պատշաճ վերահսկողությունը մեր գերակայություններից է եւ մեր արտադրանքի նկատմամբ պահանջարկի կարեւորագույն գործոններից մեկը: Այսօր խոզաբուծարանում մոտ 900 գլուխ անասուն կա, ապահովում ենք մսի արտադրության ողջ ցիկլը՝ ունենք ծնարան, նախաբտարան, բտարան, ժամանակակից սարքավորումներով հագեցած լաբորատորիա եւ սպանդանոց: Գործում է կարանտինային ռեժիմ, ապահովվում է առավելագույն անվտանգություն եւ լավագույն որակ», - ասում է Պորկետտա ընկերության համահիմնադիր Արմեն Մանուկյանը:

Ներկայում բիզնեսը ընդլայնման փուլում է. նոր ավտոմատացված հոսքագծեր, սարքավորումներ են մոնտաժվել:

«Սարքավորումներ ներկրվել են հիմնականում Եվրոպայից. լիզինգային ֆինանսավորում իրականացրել է «Կոնվերս» բանկը: Տեխնիկական վերազինման արդյունքում ավտոմատացվել է գործընթացների մեծ մասը, հնարավորություն է ստեղծվել ավելացնելու անասնագլխաքանակը, ինչը շատ կարեւոր է շուկայում մրցունակության ապահովման նկատառումով», - ասում է մեր զրուցակիցը:

«Կոնվերս» բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

*«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

# ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՀՌՉԱԿՄԱՆ ԿԱՐԻՔ ԿԱ

**Այս տարի լրանում է հայ նշանավոր քանդակագործ եւ գեղանկարիչ, եռաչափ եւ կինետիկ գեղանկարչության հիմնադիր Երվանդ Քոչարի ծննդյան 125-ամյակը:**

Հոբելյանական ծրագրերն ու միջոցառումները պաշտոնապես ներկայացվել են Երվանդ Քոչարի թանգարանում կայացած մամուլի ասուլիսի ընթացքում, որին նախորդել է նամականիշի մարման արարողությունը:

Մամուլի ասուլիսի բանախոսներն էին ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը, Երվանդ Քոչարի թանգարանի տնօրեն Կարինե Քոչարը, Հայաստանի ազգային պատկերասրահի տնօրեն Մարինա Հակոբյանը:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանի խոսքով՝ ՀՀ կառավարության որոշմամբ 2024 թ. ստեղծվել է հոբելյանական հանձնաժողով, եւ ԿԳՄՍ նախարարությանը հատկացվել է 167 մլն 261 հազար դրամ՝ իրականացնելու տարաբնույթ միջոցառումներ, որոնք ուղղված են մեծ վարպետի ժառանգության հանրահռչակմանը:

«Երվանդ Քոչարի հսկայական ժառանգությունը հանրահռչակման կարիք ունի եւ՛ Հայաստանում, եւ՛ միջազգային հարթակներում, եւ այս առումով բազմաթիվ անելիքներ ունենք: Ուզում եմ ընդգծել, որ հոբելյանական միջոցառումներն արդեն շատ վաղուց ձեռք են բերել ռազմավարական նշանակություն: Սա հնարավորություն է կենտրոնացված ուժերով եւ համատեղ ջանքերով իրականացնելու տարբեր ծրագրեր»,- ասել է Ալֆրեդ Քոչարյանը՝նշելով, որ նախատեսված ծրագրերը ներառում են ֆիլմերի դիտումներ, ցուցահանդեսներ, կրթական ծրագրեր, հեռուստատեսային ֆիլմաշար Երվանդ Քոչարի մասին, հայ- ֆրանսիական համատեղ նախագիծ նրա ժառանգության վերաբերյալ, գովազդային արշավներ, միջոցառումներ միջազգային հարթակներում եւ այլն: Ալֆրեդ Քոչարյանն իրազեկել է, որ հոբելյանական միջոցառումների օրակարգը մեկնարկելու է վաղվանից՝ «Քոչար ֆեստ» ծրագրով:

«Առանձին հետաքրքիր ծրագրեր են նախատեսված նաեւ՝ նվիրված Քոչարի քանդակներին: Հնարավոր է հետաքրքիր անակնկալ մատուցենք մեր քաղաքացիներին»,- փակագծերը չի բացել ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը:

Նրա տեղեկացմամբ՝ տեղի կունենա նաեւ Կենտրոնական բանկի թողարկած ոսկեդրամի շնորհանդեսը: ԿԳՄՍ փոխնախարարն առանձնակի ընդգծել է մարզային ծրագրերի առկայությունը, ինչին հատուկ կարեւորություն է տրվել՝ մարզերում մշակութային կյանքի ակտիվացման նպատակով:

Եզրափակելով խոսքը՝ նա հույս է հայտնել, որ հոբելյանական տարին արդյունավետ կօգտագործվի իրական հաջողությունների հասնելու եւ հնարավորինս հանրահռչակելու Երվանդ Քոչար արվեստագետին, ինչն ուղղակիորեն կանդրադառնա նաեւ թանգարանի այցելությունների թվի աճի վրա:

Աշխարհը նորովի կբացահայտի Քոչար արվեստագետին եւ նորարարին Թանգարանի տնօրեն Կարինե Քոչարը շնորհակալություն է հայտնել ՀՀ կառավարությանը եւ ԿԳՄՍ նախարարությանն աջակցության եւ լայնածավալ միջոցառումներով Քոչարին հանրահռչակելու ջանքերի համար:

«Երվանդ Քոչարն այն արվեստագետն է, որով կարող է հպարտանալ յուրաքանչյուր քաղաքակիրթ ազգ:

Նրա ժառանգությունը 20-րդ դարի համաշխարհային կերպարվեստի ուշագրավ երեւույթներից է. Քոչարը 1923-1930 թթ. եռանդուն մասնակցություն է ունեցել եվրոպական ավանգարդի ստեղծման գործում:

Հայաստան վերադառնալով՝ նա իր հետ բերել է ժամանակակից արվեստը՝ կոտրելով սոցիալիստական ռեալիզմի կաղապարները եւ հաստատել արվեստագետի ազատ եւ անկաշկանդ ստեղծագործելու իրավունքը:

Կարծում եմ՝ մեր պետության եւ թանգարանի համատեղ ջանքերով աշխարհը նորովի կբացահայտի Քոչար արվեստագետին եւ նորարարին, որը Հայաստանին եւ աշխարհին նվիրել է քարի, մետաղի եւ կտավի վրա ամրագրված մարդասիրության քարոզի հիասքանչ նմուշներ»,- ասել է Կարինե Քոչարը:

*ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ*

ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է ԵՐԵՎԱՆ

# «ՈՍԿԵ ԾԻՐԱՆ»-Ը ԿԲԱՑՎԻ Ա. ԷԳՈՅԱՆԻ ՖԻԼՄՈՎ

**Կանադահայ վարպետ Ատոմ Էգոյանը վերադառնում է Երեւանի «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոն:**




Նա այս տարվա կարճամետրաժ ֆիլմերի ժյուրիի նախագահն է: Բացի այդ, Էգոյանի բարձր գնահատանքի արժանացած նոր կինոնկարը՝ «Յոթ քողը», որի պրեմիերան նախորդ տարվա Տորոնտոյի կինոփառատոնում էր, 21-րդ «Ոսկե ծիրան»-ի բացման ֆիլմն է: Սա Ռիխարդ Շտրաուսի «Սալոմե» օպերայի կլանիչ ու վառ պատկերային վերամիաստավորումն է, որտեղ Ամանդա Սեյֆրիդը փայլում է թատերական մի ռեժիսորի դերում, ով ջանում է կյանքի կոչել Սալոմեի աստվածաշնչյան պատմության սեփական մեկնությունը: Ֆիլմը կցուցադրվի ոչ միայն բացմանը, այլեւ փառատոնի ընթացքում՝ որպես «Երեւանյան պրեմիերա»:

Նշենք նաեւ, որ փառատոնի ընթացքում Էգոյանը կարժանանա Փարաջանովյան թալեր մրցանակին՝ կինոյում ունեցած ավանդի համար:

Փառատոնն այս տարի տեղի կունենա հուլիսի 7-14-ը: Այս տարի եւս միջազգային կինոտոնը հանրությանը կներկայացնի մրցութային կինոնկարներ աշխարհի տարբեր երկրներից, ինչպես նաեւ ֆիլմեր ամենահեղինակավոր (Կաննի, Բեռլինի եւ այլն) կինոփառատոններից:

Հայաստան կժամանեն կինոյի համաշխարհային դեմքեր, ովքեր իրենց փորձն ու արվեստը կներկայացնեն կինոսերներին:

Նշենք նաեւ, որ «Ոսկե ծիրան»-ն այս տարի առանձնահատուկ անդրադարձ կկատարի երկու մեծությունների՝ Շառլ Ազնավուրի եւ Սերգեյ Փարաջանովի 100-ամյա հոբելյաններին:

ՄԱՐԶԱԿԱՆ

## ՄԻԱՑԵԼ Է «ՆՈՍԱՅԻՆ»

Երեւանի «Նոային» է միացել ռուս դարպասապահ Ալեքսեյ Պլոշչադնին: 20-ամյա ֆուտբոլիստը ռուսական «Կրասնոդարի» սան է: Նախորդ մրցաշրջանի երկրորդ հատվածն անցկացրել է Չարենցավանի «Վանում», որի կազմում անցկացրել է 8 խաղ Հայաստանի Պրեմիեր լիգայում ու գավաթի խաղարկությունում: «Նոա» ՖԱ ամբողջ անձնակազմը բարի գալուստ է մաղթել երիտասարդ դարպասապահին:

«Ես շատ ուրախ եմ նման մեծ ակումբի եւ նախագծի մաս դառնալու համար: Անհամբեր սպասում եմ այն պահին, թե երբ կարող եմ սկսել իմ ներդրումն ունենալ թիմի հաջողություններում», - թիմի նորեկի խոսքերն է մեջբերում ակումբի մամուլի ծառայությունը:

## ՇԱԲՈՒՆԱԿՈՒՄ Է ԿԱՐԻԵՐԱՆ

27-ամյա ալբանացի հարձակվողը կարիերան սկսել է ալբանական «Վլազնիայում»: 2018 թվականին տեղափոխվել է Տիրանայի «Պարտիզանի», որի կազմում 2018/19 մրցաշրջանում դարձել է Ալբանիայի չեմպիոն: Տիրանան ներկայացնող այս թիմում Չինարին 3 մրցաշրջանում անցկացրել է 75 խաղ ու դարձել 24 գոլի հեղինակ:

«Պարտիզանիից» հետո ալբանացի հարձակվողը 2 մրցաշրջան անցկացրել է «Սամսունսպորում»: Մեր նոր մարզիկը «Նոա» է տեղափոխվում հյուսիսմակեդոնական «Շկենդիայից»:

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼՈՒՄ Է

Աշխարհի 74-րդ ռակետ, թենիսիստուհի Էլինա Ավանեսյանը դուրս է եկել Մեծ Բրիտանիայի Իսթբորնում (Մեծ Բրիտանիա) ընթացող WTA-500 մրցաշարի որակավորման եզրափակիչ փուլ:

Կիսաեզրափակչի խաղում հայ թենիսիստուհին երկու սեթում 7:6 (7:1), 6:2 հաշվով հաղթել է աշխարհի 68-րդ ռակետ, դանիացի Կլարա Տաուսոնին:

Մարզիկները կորտում անցկացրել են 1 ժամ 18 րոպե:

Մրցաշարի գործող չեմպիոնն ամերիկացի թենիսիստուհի Մեդիսոն Քիսն է:

## Ո՞Վ ԿԴԱՌՆԱ «ՌԵԱԼ»-Ի ՆՈՐ ԱՎԱԳԸ

Մադրիդի «Ռեալի» կենտրոնական պաշտպան Նաչո Ֆերնանդեսի հեռանալուց հետո թիմի նոր ավագը կդառնա կիսապաշտպան Լուկա Մոդրիչը: Այս մասին հայտնել է լրագրող Միգել Անխել Դիասը:

Աղբյուրի տեղեկություններով՝ աջ պաշտպան Դանիել Կարվախալը կդառնա մադրիդյան ակումբի փոխավագը: Երրորդ ավագը կդառնա պաշտպան Լուկաս Վասկեսը:

Ավելի վաղ ՋԼՄ-ներում տեղեկություն էր հայտնվել, որ Նաչոն այս ամառ կհեռանա «Ռեալից»:

Ավելի վաղ հաղորդվում էր նաեւ, որ Մոդրիչը եւս մեկ տարով կերկարաձգի պայմանագիրը Մադրիդի «Ռեալի» հետ, որն ավարտվում է հունիսի 30-ին:

● *Հունիսի 26-ին՝ժամը 19:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Ծննդյան վկայական» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝3000-8000 դրամ:*

# ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

## ԱՐՏԱՀԱՆՈՒՄ

**ՀԱՐՑ. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ դեպի ԵԱՏՄ եւ այլ երկրներ բուսական ծագման մթերք արտահանելու համար:**

*Վարդգես Իսահակյան (40 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** ԵԱՏՄ անդամ երկրներ արտահանվող բուսական ծագման մթերքը պետք է լինի փաթեթավորման նյութի՝ արկղերի մեջ, յուրաքանչյուրի վրա հստակ մակնշմամբ, որը պետք է պարունակի հետեւյալ տեղեկատվությունը՝

ծագման երկիրը, ապրանքի անվանումը, արտադրողի անվանումը եւ հասցեն (իրավաբանական եւ գործունեության), արտահանողի անվանումը եւ հասցեն, ստացողի անվանումը եւ հասցեն, պահման ժամկետը, ջերմաստիճանը:

Արտահանվող խմբաքանակը պետք է զերծ լինի ցանկացած տեսակի կարանտին վնասակար օրգանիզմներից:

Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներ արտահանվող թարմ պտուղ-բանջարեղենի խմբաքանակի մաքսային ձեւակերպումների համար անհրաժեշտ է ունենալ հետեւյալ փաստաթղթերը.

1. արտահանման հաշիվ-ապրանքագիր, պայմանագիր. արտահանման հաշիվ-ապրանքագրում նշվում են ապրանքն արտահանողի եւ ստացողի (ԵԱՏՄ անդամ երկրի ռեզիդենտ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր) անվանումները, հասցեները, ՀՎՀՀ-ն, ապրանքի նկարագիրը, քանակը, քաշը, արժեքը,

2. տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերը-CMR

շարունակելի

*ՀՀ գյուղատնտեսության նախարարություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Կարգը հստակ ներկայացված է, մնում է ծանոթանալ եւ գործել օրենքով սահմանված կարգով:

*Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ*

## ՎՃԱՐՈՒՄՆԵՐ

**ՀԱՐՑ. Ավելացված արժեքի հարկ վճարող կազմակերպությունը պարտավո՞ր է պահպանել ստացված հարկային հաշիվները: Եթե այո, ապա ի՞նչ ժամկետով:**

*Լուսինե Մկրտումյան (42 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Լ. Մկրտումյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ վճարող կազմակերպությունը պարտավոր է առնվազն մինչեւ ստացման տարվան անմիջապես հաջորդող հինգ տարին լրանալը պահպանել ստացած հարկային հաշիվները (այդ թվում՝ սահմանված ձեւով հաստատված էլեկտրոնային հարկային հաշիվները) կամ ապրանքների ներմուծման մաքսային հայտարարագրերը:

*Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Հարկային հաշիվների, դրանց դիմաց վճարումը հաստատող փաստաթղթերի, մաքսային հայտարարագրերի պահպանման ժամկետները չեն կարող պակաս լինել ձեռք բերված ապրանքների եւ ստացված ծառայությունների մասով հաշվանցումների դեպքում ԱԱՀ-ի գծով պարտավորությունների, հաշվանցումների կամ վերադարձների հաշվին հարկային հաշվում կամ մաքսային հայտարարագրում առանձնացված ԱԱՀ-ի գումարի՝ օրենքով սահմանված կարգով մարման ժամկետից:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ համացանցից*

Հայաստանի աթլետիկայի հավաքականի անդամ, վազորդ Երվանդ Մկրտչյանը հաղթող է ճանաչվել Ջիբրալթարում անցկացված փոքր երկրների Եվրոպայի առաջնության 5000 մետր վազք մրցաձեւում:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

**«Հայմամուլ» ՓԲԸ**
հեռ. 45-82-00, 45-19-11

**«Հայփոստ» ՊՓԲԸ**
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

## ԱՌԱՋԱՐԿ
## հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

*Հեռ.՝(060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.*

## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| Շիրակ | + 7 + 12<br>+25 + 29 |
| Կոտայքի լեռներ | + 8 + 10<br>+24 + 27 |
| Կոտայքի նախալեռներ | + 19+ 21<br>+30 + 33 |
| Գեղարքունիք | + 7+ 11<br>+24 + 28 |
| Լոռի | + 9 + 14<br>+25 + 28 |
| Տավուշ | + 14+ 19<br>+29 + 33 |
| Արագածոտնի լեռներ | + 7 + 9<br>+23 + 27 |
| Արագածոտնի նախալեռներ | +16 + 20<br>+29 + 33 |

| | |
|---|---|
| Արարատ | + 19 + 21<br>+34 + 36 |
| Արմավիր | + 18+ 20<br>+34 + 36 |
| Վայոց ձորի լեռներ | + 8 + 10<br>+24 + 27 |
| Վայոց ձորի նախալեռներ | + 17 + 19<br>+33 + 35 |
| Սյունիքի հովիտներ | + 18 + 21<br>+31 + 34 |
| Սյունիքի նախալեռներ | + 12 + 16<br>+25 + 28 |
| ԼՂՀ | + 12 + 15<br>+24 + 26 |
| Երեւան | + 22 + 24<br>+ 32 + 34 |

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **24.6.2024**
*Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21*

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*